ՇԱՐ ՀՆՈՒԹԵԱՆՑ ԱՂՈՒԱՆԻՑ

Քաղուածք ի «Կենսագրական և յՕրագրական պատմութենէ» Սիմէօն արքեպիսկոպոսի Բդնունւոյ[1]), որ ի յունիս ամսոյ 1834 ամի մնացել է Սաղիանի վանքում իբրև աքսորուած Յովհաննէս Ը. կաթուղիկոսից, և յուլիսին 1837 ամի վերակոչւած յէջմիածին, որ է մին և առաջինն յութեանց բողոքողաց Յովհաննէս կաթուղիկոսէն, որոց բողոքն և պատմութիւնն շատերն են գրել ժամանակակից գրողներից, զոր օրինակ՝ Մսեր Մագիստրոսը, պ. Աղէքսանդր Երիցեանը, Աբէլ Արքեպիսկոպոսն Մխիթարեանց, Մանուէլ վարդապետ Գիւմուշխանեցին, ևայլն։ Ես այստեղ միայն Շամախւոյ քաղաքին և Սաղիանու վանքին վերաբերեալ գրուածքը կարևոր համարեցի օրինակել շամախեցւոց տեղեկութեան համար, որ մեր սիրելի շամախեցի եղբարք կարդան և իմանան թէ՝ իրենց լուսահոգի հայրերն ու պապերն ինչ առաւելութիւն և պակասութիւն են ունեցել կէս դար յառաջ, և այնպէս՝ աշխատեն իրենց հօր կամ պապի ունեցած լաւ յատկութիւնները սեպհականել իրենց իբրև աւանդ, հետևել նոցա բարի օրինակին, կրկնել նոցա ունեցած առաքինութիւնն, որոց գլխաւորն է գովելի հիւրասիրութիւնը, որ ցոյց են տուել աքսորեալ Սիմէօն արքեպիսկոպոսին, ինչպէս կը կարդաք ներքևը, և վայելել են նորա առատ օրհնութիւնը։

Եւ ահա Սիմէօն արքեպիսկոպոսի Շամախւոյն վերաբերեալ խօսքերը (*թերթ* 38 *ց*47 —*հին կոշտ թղթի վրայ*)։

1834. «27 *յունիսի մտաք Շամախի քաղաքն. երեցփոխ աղա Գէորգն*[2]) *ընկալաւ իւր օրհնեալ տունն, չայ և հաց կերց-*

---

[1]) Այս պատմութեան գիրքը, նոյն ինքն Սիմէօն արքեպիսկոպոսի ձեռօք գրած 1832 թուից, տուեց ինձ Տէր Սարգիս եպիսկոպոս Տ. Գասպարեան հոգևոր եղբայրն մեր (Գիրքը մնաց Պ. Երիցեանի մօտ)։

[2]) Աղա Գէորգն է հայր եօքջայեանց Յակոբ աղայի, որ ի 1895 ամի եւս է առաջին իշխաններից մինը Շամախւոյ։